# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի <<Արագյուղի <<Տիգրանակերտ կրթարան>> միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի աշխարհագրության – 11 ժամ, տեխնոլոգիայի- 4 ժամ / տղաների և աղջիկնել ի խումբ / , կերպարվեստի- 3 ժամ, ֆիզիկայի- 17 ժամ, հայոց լեզվի և գրականության – 21 ժամ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 12-ին ժամը 14:00-ին, Արագյուղի <<Տիգրանակերտ կրթարան>> միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ գ. Արագյուղ 2 փողոց, 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ ( 0224 ) 6-28-13, 098-99-04-03 :

Դպրոցի տնօրեն՝ Ա. Պետրոսյան